ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ «ԱՆՆԱ» ՄԵԹՈԴԸ

Աստվածաշնչի ուսումնասիրությունն «ԱՆՆԱ» մեթոդի միջոցով ենթադրում է ուսումնասիրության երեք փուլ.

1. Անցյալ (ԱՆ)

Քայլ 1. Կարդացվում է հատվածը: Կատարվում է վերլուծություն՝ այսինքն դուրս է բերվում իմաստը Աստվածաշնչից:

Քայլ 2. Պատասխանվում է «Ի՞նչ է ասում հեղինակը, կամ Ինչի՞ն էր հավատում հեղինակը» հարցին:

Դա վերաբերում է 1-ին դարին և ավելի վաղ ժամանակաշրջանին:

2. Ներկա (Ն)

Պատասխանվում է «Ի՞նչ է դա նշանակում մեր օրերում, կամ՝ Ինչի՞ն պետք է ես հավատամ» հարցին: Այսինքն պարզվում է, թե որն է սկզբունքը մեր օրերում:

3. Ապագա (Ա)

Պատասխանվում է «Ինչպե՞ս կարող եմ ես այդ սկզբունքը կիրառել իմ կյանքում» հարցին:

Այս մեթոդի օգնությամբ հնարավոր է հակիրճ, բայց ըստ էության պարզել համապատասխան գլխի կամ հատվածի իմաստը և կիրառության հարցը մեր կյանքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հրատարակիչ. Գյումրիի Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցի, հեռախոս՝ (+312) 5 18 09
Խմբագիր՝ Պավել Սարգսյան
Հեռախոս՝ (+374) 93 22 76 77, (+374) 95 86 05 31
Էլ. հասցե՝ pavelsargsyan@yahoo.com
Բլոգ՝ www.christian7habits.blogspot.com
Կայք՝ www.elpidos.narod.ru
Եկեղեցու տեղեկատվության բաժնի վարիչ՝ Կարինե Խաչատրյան
Հեռախոս՝ (+374) 93 93 45 94
Տեղեկատվության բաժնի խորհրդի անդամներ՝ Կարինե Խաչատրյան, Հովհաննես Գառգալոյան, Սահականուշ Գևորգյան, Հասմիկ Ղազարյան, Պավել Սարգսյան

ՀԱՄԱՁԱՅՆ

Երկիր, երկիր, երկիր, լսիր Տիրոջ խոսքը: Երեմիա 22.29

ԳՅՈՒՄՐԻԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՕՐՎԱ ԱԴՎԵՆՏԻՍՏՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

Թողարկում 2

21 ապրիլի, 2012

«ՈՐՈՆԵՑԵՔ ՏԻՐՈՋ ԳՐՔՈՒՄ ԵՎ ԿԱՐԴԱՑԵՔ»

Եսայիա մարգարեի գրքից (34.16) վերցված այս խոսքերը մեզ համար արդիական են այնքանով, որ մենք հաճախ չենք հետևում այս խորհրդին և կյանքում անհաջողություններ ենք ունենում այն պարզ պատճառով, որ չենք առաջնորդվում Տիրոջ խոսքով:

Անցած շաբաթ ներկայացնելով Աստվածաշնչի ուսումնասիրության 49 ընթերցման մեթոդը, ուշադրություն դարձրեցի մի քանի հանգամանքների: Երբ եկեղեցում միասին վերլուծում էինք արդեն կարդացվածը և փորձում գտնել անհասկանալի հարցերի պատասխանները, ապա նկատելի էր, որ շատերի համար դժվար է հետևել ներկայացված մեթոդին մի քանի պատճառներով: Նախ՝ ժամանակի խնդիրը կա. եթե նույնիսկ ամեն հարցի մեկ րոպեի ընթացքում պատասխանենք, ապա դա արդեն կզբաղեցնի 49 րոպե: Այս մեթոդը շատ օգտակար է, երբ ժամանակը սահմանափակ չէ և հատվածն էլ համեմատաբար փոքր է, քան ամբողջ գլուխը: Բացի այդ եկեղեցու որոշ անդամների համար դժվար է բոլոր կետերին անպայմանորեն հետևվելը փորձի պակասի պատճառով:

Քանի որ ապրիլի 17-ից արդեն սկսել ենք ամեն օր մեկական գլուխ կարդալ, ուստի ներկայացնում եմ երեք այլ մեթոդներ նույնպես, որպեսզի յուրաքանչյուրն ընտրի իրեն հարմար տարբերակը:

Ամեն օր գոնե մեկ ժամ կարդացեք Աստծո խոսքը և եթե հնարավոր չէ որևէ հիմնարար մեթոդի միջոցով ուսումնասիրել այն, ապա գոնե օգտվեք «ԱՆՆԱ» մեթոդից, որն ապահովում է նվազագույն սերտողություն:

Խմբագիր

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ 10 ՔԱՅԼԵՐԸ

Քայլ 1. ՀԵՏԱԶՈՏԵԼ

Հատվածը կարդալ մի քանի անգամ բովանդակությանը լավ ծանոթանալու համար:

Քայլ 2. ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

Այս փուլում անհրաժեշտ է տալ «ո՞վ», «ե՞րբ», «ի՞նչ», «որտե՞ղ», «ինչո՞ւ» հարցերը:

Քայլ 3. ՊԱՐԶԵԼ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Այլ թարգմանությունների, համաբարբառի, բառարանի, տեղեկատուի, մեկնաբանության, համացանցի կամ այլ միջոցներով պարզել բառերի (հատկապես՝ բանալի բառի) իմաստը:

Քայլ 4. ՎԵՐԼՈՒԾԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարզել հատվածի բնույթը (փաստի արձանագրում, հարց, պատվեր, թե՞ բացականչություն) և գրական ոճը (ուսմունք, պատմություն, քնարերգություն):

Քայլ 5. ՊԱՐԶԵԼ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս փուլում անհրաժեշտ է ըստ հնարավորինս պարզել գլխի, գրքի և Աստվածաշնչի համատեքստը:

Քայլ 6. ՊԱՐԶԵԼ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Պարզել ո՞վ, ո՞ւմ և ի՞նչ խնդրի կապակցությամբ է գրել, ինչպես նաև գրելու առիթը, նպատակը, վայրը և ժամանակը:

Քայլ 7. ՀԱՄԵՄԱՏԵԼ ԱՅԼ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Դա անել հնարավոր է համաբարբառի, զուգահեռ վկայությունների կամ համակարգչային աստվածաշնչյան ծրագրի միջոցով:

Քայլ 8. ԳՐԵԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անել եզրակացություններ և գրել սեփական մեկնաբանությունը:

Քայլ 9. ՎԵՐԱՊԱՏՄԵԼ

Հասկանալով հեղինակին, գրավոր փոխանցել նրա միտքը, օգտագործելով ժամանակակից արտահայտություններ:

Քայլ 10. ԿԻՐԱՌԵԼ

Ի՞նչ դաս քաղեցի այս հատվածից և ի՞նչ պետք է փոխեմ իմ կյանքում:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԵԹՈԴ. 20 ԸՆԹԵՐՑՈՒՄ

1-ին ընթերցում. Ծանոթանալ բովանդակությանը

2-րդ ընթերցում. Վերնագիր և ենթավերնագրեր գտնել

3-րդ ընթերցում. Պատասխանել «ո՞վ», «ե՞րբ», «որտե՞ղ», «ի՞նչ», «ինչո՞ւ» հարցերին

4-րդ ընթերցում. Դուրս գրել ուսումնասիրվելիք բառերը

5-րդ ընթերցում. Ընթերցել թարգմանությունները

6-րդ ընթերցում. Օգտվել համաբարբառից

7-րդ ընթերցում. Պարզել բառերի իմաստը

8-րդ ընթերցում. Պարզել նախադասության կառուցվածքը

9-րդ ընթերցում. Ուսումնասիրել համատեքստը

10-րդ ընթերցում. Ընթերցել մեկնաբանություններ

11-րդ ընթերցում. Պատասխանել «ո՞վ», «ե՞րբ», «որտե՞ղ», «ի՞նչ», «ինչո՞ւ» հարցերին (կրկնել)

12-րդ ընթերցում. Պարզել մեր օրերում տվյալ սկզբունքի կիրառության հարցը

13-րդ ընթերցում. Գտնել պատվերները, խոստումները և նախազգուշացումները

14-րդ ընթերցում. Պարզել սկզբունքը սեփական կյանքում կիրառելու հարցը

15-րդ ընթերցում. Գրել սեփական եզրակացությունները և մեկնաբանությունները

16-րդ ընթերցում. Առանձնացնել և սովորել անգիր համարները

17-րդ ընթերցում. Ի՞նչ ներշնչում ստացա այս հատվածից

18-րդ ընթերցում. Կատարել նշումները Աստվածաշնչի մեջ

19-րդ ընթերցում. Հարցեր կազմել մրցույթների համար

20-րդ ընթերցում. Համառոտագրություն կազմել ելույթի համար